ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՌՑԱՆՑ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ընկերությունը ձեռնարկել է հնարավոր բոլոր միջոցները՝ ապահովելու, որ Ընկերության բոլոր Բաժնետերերը լիարժեք օգտվեն իրենց իրավունքներից հնարավորինս դյուրին, անվտանգ և բազմազան եղանակներով: Մասնավորապես՝ ստեղծվել է հնարավորություն իրական ժամանակի ռեժիմում Ժողովին առցանց կամ ֆիզիկապես մասնակցելու միջոցով հաղորդակցվելու և քվեարկելու: Ընկերությունը հնարավորություն է ընձեռել Բաժնետերերին ընտրելու Ժողովին մասնակցելու իրենց համար առավել նախընտրելի տարբերակը, ընդ որում՝ անկախ մասնակցության եղանակից՝ չբացառելով որպես Բաժնետեր իրենց իրավունքներից օգտվելու հավասար հնարավորությունը:

ԺՈՂՈՎԻՆ ՖԻԶԻԿԱՊԵՍ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Այն բաժնետերերը, ովքեր ցանկանում են ֆիզիկապես ներկա գտնվել Ժողովին, պետք է սույն հղման միջոցով ուղարկեն Ժողովին ֆիզիկապես մասնակցելու մասին հայտը: Ժողովի անցկացման սրահի հնարավորություններից ելնելով՝ Ժողովին կարող է ֆիզիկապես ներկա գտնվել սահմանափակ թվով Բաժնետեր:

Կարևոր է իմանալ

- Ժողովի մասնակիցներին խնդրում ենք մոտենալ մինչ Ժողովի մեկնարկը՝ ժամը 15:00ն, բայց ոչ շուտ, քան մեկ ժամ առաջ:
- Ժողովին մասնակցող Բաժնետերերը պետք է գրանցվեն սրահի մուտքի մոտ:
- Խնդրում ենք Բաժնետերերին ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով**, ինչպես նաև որպես ներկայացուցիչ Ժողովին մասնակցելու պարագայում ներկայանալ օրենքով սահմանված կարգով տրամադրված լիազորագրով կամ ներկայացուցչությունը հիմնավորող այլ փաստաթղթով:

ԺՈՂՈՎԻՆ ԱՌՑԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Եթե Բաժնետերը չի ներկայացրել Ժողովին ֆիզիկապես մասնակցելու մասին հայտ, ապա կարող է Ժողովին հետևել իրական ժամանակի ռեժիմում՝ Youtube հարթակի փակ հեռարձակման միջոցով, որին միանալու հղումը լրացուցիչ կուղարկվի Բաժնետիրոջ էլեկտրոնային փոստի հասցեին:

ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն բոլոր Բաժնետերերը՝ անկախ տնօրինվող բաժնետոմսերի քանակից, ովքեր 2026 թվականի մայիսի 29-ի ժամը 18:30-ի դրությամբ ընդգրկված կլինեն բաժնետերերի ռեեստրում: Անկախ ֆիզիկական կամ առցանց մասնակցությունից՝ Բաժնետերը իրավունք ունի ստորև ներկայացված եղանակներով մասնակցելու քվեարկությանը:

ԻՆՉՊԵ՞Ս ՔՎԵԱՐԿԵԼ

1. Քվեաթերթիկների ներկայացման ժամկետներն ու եղանակները:

Բաժնետերերը Ժողովի մասին ծանուցումը ստանալու պահից սկսած կարող են լրացված քվեաթերթիկներն ուղարկել Ընկերությանը մինչև 2026 թ. հունիսի 25-ի ժամը 24:00-ն՝ հետևյալ եղանակներով.

- **էլեկտրոնային փոստով՝** ուղարկելով invest@telcell.am հասցեին,
- **թղթային եղանակով (անձամբ կամ փոստով)՝** ներկայացնելով Ընկերության գլխավոր գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք, 1-ին սեկցիա, 3-րդ հարկ,
- **Ժողովի ընթացքում՝** Ժողովին ֆիզիկապես ներկա Բաժնետերերը կարող են քվեարկել տեղում և լրացված քվեաթերթիկն անձամբ հանձնել Հաշվիչ հանձնաժողովին:

Ուշադրություն. *Ժողովի* ***քվորումի*** *հաշվարկման համար Ընկերության կողմից հաշվի են առնվում բացառապես մինչև Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը՝* ***հունիսի 25-ի ժամը 15:00-ն*** *ստացված քվեաթերթիկներով փրամադրվող ձայները:*

2. Քվեների հաշվառման և վավերականության պայմանները

- Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հաշվի են առնվում միայն այն հարցերի ձայները, որոնցում քվեարկողի կողմից ընտրված է **միայն մեկ** տարբերակ:
- Այս պահանջի խախտմամբ (մեկից ավելի տարբերակներ նշված լինելու դեպքում) հարցի քվեարկությունը համարվում է անվավեր և ձայների հաշվարկին չի մասնակցում:
- Եթե քվեաթերթիկը ներառում է օրակարգի մի քանի հարց, ապա մեկ կամ մի քանի հարցում թույլ տրված խախտումը հիմք չի հանդիսանում ամբողջ քվեաթերթիկն անվավեր ճանաչելու համար. մնացած հարցերի վերաբերյալ քվեարկությունը մնում է ուժի մեջ:
- Նույն բաժնետիրոջ կողմից մեկից ավելի անգամ քվեաթերթիկով քվեարկելու դեպքում հաշվի կառնվի առավել ուշ ներկայացված քվեաթերթիկը, իսկ նախորդ տարբերակները կհամարվեն անվավեր և հաշվի չեն առնվի ձայների հաշվարկի ժամանակ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվիչ հանձնաժողովը որոշում է Ժողովի քվորումը, Բաժնետերերին և նրանց ներկայացուցիչներին բացատրություններ է տալիս Ժողովում օրակարգի հարցերի քվեարկման կարգի վերաբերյալ, ապահովում է քվեարկության սահմանված կարգը և Բաժնետերերի՝ քվեարկությանը մասնակցելու իրավունքը, իրականացնում է ձայների հաշվարկը, ամփոփում է

քվեարկության արդյունքները, դրանց վերաբերյալ կազմում է արձանագրություն և Ընկերության արխիվ է փոխանցում քվեաթերթիկները:

Ընկերության հաշվիչ հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝

Լյուդմիլա Ղազարյան
(Կորպորատիվ քարտուղար, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ)

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

Վարդուհի Ֆարմանյան
(Իրավաբան, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ)

Անդրանիկ Բարոյան
(Համապատասխանության ապահովման, ռիսկերի և ներքին դիտարկման բաժնի ղեկավար, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ)

Սոնա Վարոսյան
(Որակի վերահսկման բաժնի ղեկավար, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ)

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՑԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ընկերության Բաժնետերերը Ժողովի օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կարող են ներկայացնել հարցեր՝ օգտվելով հարցերի ներկայացման հետևյալ եղանակներից.

1. Նախապես ներկայացվող գրավոր հարցեր (մինչև Ժողովի օրը)

Յուրաքանչյուր Բաժնետեր իրավունք ունի գրավոր ներկայացնել մեկ կամ մի քանի հարց, որոնց պատասխանները կհրապարակվեն Ընկերության կայքում, ինչպես նաև կներկայացվեն Ընդհանուր ժողովի ընթացքում՝ ստորև նկարագրված պայմաններով:

Այն Բաժնետերերը, ովքեր ցանկանում են իրենց հուզող հարցերը ներկայացնել գրավոր, կարող են սույն ծանուցման օրվանից մինչև **2026 թ. հունիսի 24-ը ներառյալ** ուղարկել դրանք (օգտագործելով հարցերի և առաջարկների համապատասխան ձևանմուշը) հետևյալ եղանակներով.

- **էլեկտրոնային փոստով՝** invest@telcell.am հասցեին,
- **թղթային (փոստային) եղանակով՝** Ընկերության գլխավոր գրասենյակ:

2. Հարցերի ներկայացում Ժողովի ընթացքում (առցանց մասնակիցների համար)

Ժողովին հեռավար (առցանց) հետևող Բաժնետերերը կարող են իրենց գրավոր հարցերն ուղղել անմիջապես Ընդհանուր ժողովի ընթացքում՝ **YouTube** հարթակի հաղորդագրությունների (չատի) միջոցով:

3. Հարցերի ներկայացում ժողովի ընթացքում (ֆիզիկապես ներկա մասնակիցների համար)

Ժողովին ֆիզիկապես ներկայացած Բաժնետերերին հարցեր հնչեցնելու հնարավորություն կտրվի հատուկ **«Հարց ու պատասխան» փուլի ընթացքում՝** բանավոր կերպով:

> *Ընթացակարգը*. Բանավոր հարց հնչեցնելու համար Բաժնետերը բարձրացնում է ձեռքը, ինչից հետո Ընկերության աշխատակիցը մոտեցնում է բարձրախոսը, և Բաժնետերը (ուղիղ հեռարձակման և ձայնագրության պայմաններում) հնչեցնում է իր հարցը:

Բաժնետերերին խնդրում ենք ծանոթանալ հետևյալ կանոններին.

- պատասխան կստանան միայն Ընդհանուր ժողովի օրակարգին վերաբերող հարցերը,
- Ընկերությունը չի պատասխանի անձնական, հաճախորդների հետ կապված կամ առևտրային բնույթի հարցերին,
- պատասխան չի ստանա վիրավորական կամ զրպարտիչ արտահայտություն պարունակող ցանկացած մեկնաբանություն կամ հարց,
- պատասխան չի ստանա ցանկացած հարց, որը բավականաչափ հասկանալի կամ հստակ չէ,
- Բաժնետիրոջ պարտականությունն է ապահովել, որ հարցը լինի ընթեռնելի, պարզ և հասկանալի:

Հարցերն ըստ թեմաների խմբավորելուց հետո Ընդհանուր ժողովի ընթացքում կտրվեն հնարավորինս շատ հարցերի պատասխաններ:

Հարցերի տրման ձևաթուղթը հրապարակված է Ընկերության կայքում: